ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
Գեղամ Վարդանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
2019թ. հոկտեմբերի 29-ից 31-ը Ուզբեկստանի Հանրապետության քաղաք Տաշքենդ:

4. **Հրավիրող կողմը.**
Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**
Մասնակցություն «INNOWEEK.UZ» նորարարական գաղափարների շաբաթ միջազգային համաժողովին և ցուցահանդեսին:

6. **Քննարկված թեմաները.**
2019թ. հոկտեմբերի 29-ից 31-ը Ուզբեկստանի Հանրապետության Տաշքենդ քաղաքում կայացան «Նորարարական գաղափարների շաբաթ» միջազգային համաժողովը և ցուցահանդեսը (INNOWEEK.UZ), որոնց ս.թ. հոկտեմբերի 29-ից 31-ը մասնակցել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը:

«INNOWEEK.UZ»-ը այն եզակի հարթակներից է, որը միավորում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հետազոտական և նորարարական կենտրոնների, ներդրումային ֆոնդերի, տեխնոլոգիական գործակալությունների, տեխնոլոգիական պարկերի և բիզնես ինկուբատորների ներկայացուցիչներին: Մասնավորապես՝ 2019թ. հոկտեմբերի 29-ին տեղի է ունեցել միջազգային Նորարարական գաղափարների շաբաթ ցուցահանդեսի բացումը, որի ժամանակ ՀՀ պատվիրակության ղեկավար Գեղամ Վարդանյանը հանդես է եկել ելույթով՝ նշելով միջազգային հանրության (այդ թվում՝ Ուզբեկստանի) և Հայաստանի միջև գործընկերության զարգացման կարևորությունը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում բոլոր պետությունների զարգացման և փորձի փոխանակման նշանակությունը: Գ. Վարդանյանը խոսել է Հայաստանի ուսումնական կենտրոնների և դրանց նմանօրինակ հաստատությունները Ուզբեկստանի դպրոցներում ու համալսարաններում ներդրնելու հնարավորության, ինչպես նաև բանկային ոլորտի թվայնացման, առողջապահության և ջրամատակարարման խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների մասին: Նախարարի տեղակալը ներկաների ուշադրությունը հրավիրել է հայկական արտադրության համակարգիչների և հեռախոսների ու դրանց որակական հատկանիշների վրա, որոնք ցուցադրվել են միջոցառման ժամանակ:

Ցուցահանդեսի ողջ ընթացքում Հայաստանն, այլ երկրների հետ միասին, միասնական տաղավարի միջոցով ներկայացրել է բարձր տեխնոլոգիաների ոլորտում իր նորարարական և կրթական. ծրագրերը, ծանոթացրել երկրում նշված ոլորտում ներդրումներ կատարելու հնարավորություններին և համագործակցության եզրեր մշակելու տարբերակներին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

«Ուզեքսպոցենտր»-ի տարածքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հայկական միասնական տաղավարով ներկայացրել է հայկական ընկերությունները և դրանց թվային ու նորարարական լուծումները կրթության, բանկային, CRM համակարգերի, ջրամատակարարման, արողջապահության և ճարտարագիտության ոլորտներում:

«INNOWEEK.UZ» միջոցառման շրջանակներում բարձր տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ պատվիրակությունն ունեցել է հետևյալ հանդիպումները:

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գ. Վարդանյանի հանդիպումներ ունեցավ Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարար Իբրահիմ Աբդուրահիմոնովի և նորարարությունների զարգացման փոխնախարար Ազիմժոն Նազարովի, ինչպես նաև Ուզբեկստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Օլիմժոն Ումարովի հետ: Ուզբեկստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Օլիմժոն Ումարովը Գեղամ Վարդանյանին ներկայացրեց նախարարության գործառույթները, ինչպես նաև իրականացված և իրականացվելիք ծրագրերը և առանձնացրեց այն ոլորտները որոնց շրջանակներում առկա է համագործակցության հեռանկար: Գեղամ Վարդանյանը իր հերթին ներկայացրեց նախարարության կողմից իրականացվող ծրագրերը և առաջնահերթությունները: Ուզբեկական կողմին գլխավորապես հետաքրքրեց Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ուղենշած դպրոցից մինչև արդյունաբերության ոլորտ տանող կրթական ճանապարհը, որն էլ մանրամասն ձևով ներկայացվեց ուզբեկական կողմին: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գ. Վարդանյանը իր ուզբեկ գործընկերներին հրավիրեց Հայաստան՝ ծանոթանալու «Armath», «Tumo», «ANEL» կրթական ծրագրերին, ինչպես նաև քննարկելու՝ դրանք ՈՒզբեկստանի կրթական համակարգում ներդնելու հարցը:

- «ERP Smart System»-ը հանդիպումներ է ունեցել Ուզբեկստանի նորարարական զարգացման նախարարության ներկայացուցիչների, Ուզբեկստանի Կենտրոնական և «Տուրոն» բանկերի, «MAORIFPLUS» տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերության, Ուզբեկստանի Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի պաշտպանության պետական հանձնաժողովի, Կորեական ձեռնարկությունների նորարարությունների խթանման ինստիտուտի հետ:
- «EarlyOne» ընկերությունները հանդիպել է «Ալոքա», «Ասաքա», «Կապիտալ», «Իպոտեկա», «Միկրոկրոդիտ», «Qishloq Qurilish» բանկերի հետ:
- «Locator» ընկերությունը ունեցել է հանդիպումներ Ուզբեկստանի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, «Ուզինֆոկոմ» ընկերության, Ուզբեկստանի Հանրապետության ջրային ռեսուրսների նախարարության և Տաշքենդի «Սուվսոզ» ձեռնարկության ներկայացուցիչների հետ:
- «SFL» ընկերությունը հանդիպել է Ուզբեկստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, Կենտրոնական բանկի ներկայացուցիչների, «Ասակա», «Տուրոն», «Օրիենտ ֆինանս» բանկերի ներկայացուցիչների հետ:
- «YEA Engeneering» ընկերությունը հանդիպել է Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարության, «Նամանգան» տեխնոլոգիական համալսարանի, Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայի, Տաշքենդի քիմիական տեխնոլոգիաների նորարարական կենտրոնի, «Optimum» և «Rockwell Automation» կազմակերպությունների հետ:

- «TSD» ընկերությունն ունեցել է հանդիպումներ Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարության, Բրունեյի տեխնոլոգիական համալսարանի, Տաշքենդի ճարտարագիտական և տեխնոլոգիական գրասենյակի հետ:
- «Armath», «Tumo», «ANEL» կրթական ծրագրերով հետաքրքրվել են Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարությունը, Ուզբեկստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, «GreenTech», «Yoshinn», «Kaizen», «Craft Talk», «Go to Asia.market» ընկերությունները:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է նաև Ուզբեկստանում հայկական համայնքի հետ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Վերոնշյալ հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածություններ, և ստորագրվել են մի շարք փոխըմբռնման հուշագրեր:

- «ERP Smart System»-ը համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր է կնքել Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարության հետ: Ուզբեկստանի Կենտրոնական և «Տուրոն» բանկերը, ինչպես նաև «Bureau of Innovative Chemical Technologies»-ը պատրաստվում են գործարկել CRM և ERP փորձնական նախագիծը, Ուզբեկստանի Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի պաշտպանության պետական հանձնաժողովը նախատեսում է ներդնել CRM և ERP համակարգերը, Կորեական ձեռնարկությունների նորարարությունների խթանման ինստիտուտը հետաքրքրվել է «ERP Smart System» նորարարական նորաստեղծ ձեռնարկությունում ներդրումներ կատարելու հնարավորությամբ:
- «Locator» ընկերությունը փոխըմբռնման հուշագրեր կնքեց Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարության և «Ուզինֆոկոմ» ընկերության հետ: Ուզբեկստանի Հանրապետության ջրային տնտեսության նախարարության հետ բանակցություններ են վարվել ոռոգման ջրի մոնիտորինգի համար Locator SCADA համակարգի ներդրման վերաբերյալ: Տաշքենդի «Սուվսոզ» ընկերության հետ քննարկվել են խմելու ջրի մոնիտորինգի համար Locator SCADA համակարգի ներդրման և հնարավոր գործընկերության տարբերակները:
- «SFL» ընկերությունն առևտրային առաջարկ է ուղարկել Կենտրոնական, «Ասակա», «Տուրոն», «Օրիենտ ֆինանս» բանկերի ներկայացուցիչներին և պատրաստվում է համատեղ փորձնական նախագծեր մեկնարկել նշված բանկերի հետ:
- «YEA Engeneering» ընկերությունը կնքել է փոխըմբռնման հուշագրեր Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարության և «Նամանգան» տեխնոլոգիական համալսարանի հետ: Ուզբեկստանի գիտությունների ակադեմիան, Տաշքենդի քիմիական տեխնոլոգիաների նորարարական կենտրոնը, «Optimum» և «Rockwell Automation» կազմակերպությունները հետաքրքրվածություն են հայտնել Ընկերության հետ համագործակցությամբ:
- «TSD» ընկերության հետ պատրաստ են համագործակցել Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարությունը, Բրունեյի տեխնոլոգիական համալսարանը, Տաշքենդի ճարտարագիտական և տեխնոլոգիական գրասենյակը: Ընկերության ռադիո-հեռախոսը ցուցահանդեսի այցելուների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացրել:
- «Armath», «Tumo», «ANEL» կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցությամբ են հետաքրքրվել Ուզբեկստանի Հանրապետության նորարարական զարգացման նախարարությունը, Ուզբեկստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների նախարաությունը, «GreenTech», «Yoshinn», «Kaizen», «Craft Talk», «Go to Asia.market» ընկերությունները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Գեղամ Վարդանյան
05.11.2019թ.